

ՀԱՇՎԻ ԲԱՑՈՒՄԸ

- Սոցիալական փաթեթի հաշիվը նախատեսված է ՀՀ օրենսդրությամբ սահմանված շահառուների համար և բացվում ու սպասարկվում է Բանկի կողմից՝ համաձայն ՀՀ կառավարության 27 դեկտեմբերի 2012 թվականի N 1691-Ն որոշման (այսուհետ նաև՝ Որոշում), Բանկի ընթացակարգերի և Բանկի ներքին իրավական ակտերի:
- Նախքան Հաշվի բացումը՝ Բանկի աշխատակցի կողմից հաճախորդները մանրամասն տեղեկացվում են հաշիվների բացման պայմանները:
- Հաշիվ բացելու համար անհրաժեշտ փաստաթղթերն ընդունվում են Սպասարկող աշխատակցի կողմից:
- Ֆիզիկական անձ հաճախորդի Հաշիվը բացելու վերաբերյալ Բանկի կողմից դրական որոշման կայացման դեպքում Սպասարկող աշխատակիցը բացում է Հաշիվը:
- Հաճախորդի Հաշվի բացման վերաբերյալ բացասական որոշման դեպքում գործընթացն ավարտվում է այս փուլում:
- Սոցիալական փաթեթի հաշվի բացման դեպքում Սոցիալական փաթեթի հաշվի մասին տեղեկանքը տրամադրվում է հաճախորդին՝ վերջինիս գործատուին կամ այլ բանկ ներկայացնելու նպատակով:
- Հաշվի պայմանագրերը ստորագրվում են հաճախորդի և պայմանագիրը ստորագրելու լիազորություն ունեցող Բանկի աշխատակցի միջև: Ընդ որում՝ հաճախորդի ցանկության դեպքում հաշվի պայմանագրի իր օրինակը կարող է կնքվել մասնաճյուղի/Կորպորատիվ հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման բաժնի կողմից:
- Հաշիվը բացելուց հետո հաշվի պայմանագրի մեկ օրինակը և հաշվի վերաբերյալ տեղեկանքը հանձնվում է հաճախորդին՝ իր գործատուին և/կամ իր սոցիալական փաթեթի հաշիվը սպասարկող այլ բանկ ներկայացնելու նպատակով:

ՀԱՇՎԻ ՓԱԿՈՒՄԸ

- Հաճախորդն իրավունք ունի փակել Հաշիվը՝ այդ մասին գրավոր դիմելով Բանկ: Ընդ որում՝ Հաշիվը փակելու նպատակով պետք է ներկայացվի անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ:
- Հաճախորդի դիմումը ստանալու նույն օրը Բանկը պարտավոր է փակել հաճախորդի Հաշիվը բացառությամբ ստորև նշված դեպքերի.
 - Հաշվին առկա է մնացորդ
 - Հաճախորդն օգտվել է սոցիալաբեթի ծառայություններից, ձևակերպել պարբերական փոխանցման հանձնարարական, որի ժամկետը դեռ չի լրացել և կազմակերպությանը ծառայության մատուցման համար գումարն ամբողջությամբ չի փոխանցվել:

Սույն կետով նախատեսված դեպքերում Հաշվի պայմանագիրը շարունակում է իր գործողությունը մինչև Հաշվի փակման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը: